ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2023 թվական N 491-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 28.09.2023 թվականի ՀՀ կառավարության «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և ՀՀ մարզպետների աշխատակազմերին գումար հատկացնելու մասին» 1657-Ն որոշման պահանջով և «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

որոշում եմ.

1. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմին հատկացված (ծրագիր–1212, միջոցառում–12030) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասկարգման 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն բռնի տեղահանված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների ձեռքբերմանն ու ծառայությունների մատուցմանն օժանդակելու համար 1 (մեկ) անձի տրամադրել ծախսված գումարների փոխհատուցում՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ բանկին փոխանցելու միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 11/27/2023 09:35:11 GMT+4

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի
2023թ.-ի նոյեմբերի 24-ի N 491 -Ա որոշման

Դրամական փոխհատուցում ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Գումարը	Ծանոթություն
1	Մերի Դատումյան	99000	
	Ընդամենը	**99000**	